ԱՐՄԷՆԻԱ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՑԻՆ ՓԱՂԱՓԱԿԱՆ ԵՒ ԱՅԼ

ԲԱՆԱԿՈՉՈՒԹԻՒՆ

Ասիկա տեղի համար ուր այս լրագրի մուտքը արդիլուած չէ, ամբողջ 14րդ շրջանի (98 օգոստ.—99 մայիս) բաժնորդագինն է 20 Ֆր. կանխիկ կարելի է նաև բաժնորդագրուիլ քանի ամսի համար որ ուզուի, ամեն մէկ ամսականը 2½ Ֆր. հաշուելով և 1899 մայիս ամսէն անդին չանցնելու պայմանով։

Նամակ և ծրարպէտք է ղրկել հետեւեալ հասցէով. M. PORTOUKALIAN, Rédacteur du journal *Arménia*. MARSEILLE (France)։

ԹՈՂ ՏԱՐՒՈՅ ԹԻՒԻ 21

1898 ՀՈԿՏԵՄԲԵՐ 15

1898 ՀՈԿՏԵՄԲԵՐ 3 (Հ. Տ.)

ԳԱՂԱՓ

Կը հրատարակուի Շաբթ. օրեր

ԳՈՒՅՔԱՆՈՆՆԵՐ

Խմբագրութիւնը, եթէ հարկ համարի, համառօտելով և կամ ամբողջ միայն կը հրատարակէ իրեն ղրկուած գրութիւնները։ Չարաւորը չէ վերադարձնել չհրատարակուած ձեռագիրները։

Գանուցումներ կընդունուին հայերէն և ֆրանսերէն լեզուով

Գանուցման 1 միլիմէթրը 1 սանտիմ արժէ։ 1 գիլոգրը 2 սանտիմ։

Les annonces, en français et en arménien, sont reçues aux bureaux de la Rédaction : Rue Glandevès, 17.

ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԻՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ "ԱՐՄԷՆԻԱ„Ի ԴԴ ՇՐՋԱՆԻՆ

(1898 *ՕԳՈՍՏՈՍ*—99 *ՄԱՅԻՍ*)

Արմէնիայի բաժնորդագրութեան պայմանները նոյնը կը մնան։ Թէ՛ օգոստոսէն, թէ՛ սեպտեմբերէն և թէ՛ հոկտեմբերէն սկսելով բաժնորդ եղողները հաւասարապէս կը պարտին վճարել 20 ֆրանք բաժնորդագինն մինչև 14րդ շրջանի վերջը (1899 մայիսի վերջ)։ Իսկ անոնք որ ամբողջ 14րդ շրջանին (1898 օգոստ. — 99 մայիս) համար չեն բաժնորդագրուիր, կարող են ամսական 2½ ֆր.ի հաշուով բաժնորդագրուիլ քանի ամսի համար որ ուզեն, 1899ի մայիս ամսէն անդին չանցնելու պայմանով։

ԱՐՄԷՆԻԱՅԻ ՕԺԱՆԴԱԿՆԵՐՆ ԻՐԵՆՑ համար ստացած մէկ օրինակ Արմէնիայէն դուրս՝ որի բաժնորդագինը 20 ֆր. է, ուրիշների համար քանի օրինակ Արմէնիա որ ուզեն, իրենց լրագրի ծրարին մէջ գրուած կը ղրկուի առանց ուրիշ հասցէ վրան գրելու և անոնց բաժնորդագինը ամսական մէկ ֆրանք միայն հաշուելով։ Յանկացողներին կը ղրկուի Արմէնիայի Օժանդակութեան կանոնագիրը։

Որովհետև մենք մեր թերթեր մեր բաժնորդների թուին համեմատութեամբ կը տպենք և ո՛չ շատ աւելի, օգոստոսի սկզբէն Արմէնիա ունենալ ուզողները պէտք է փութան բաժնորդ գրուելու, կանխիկ ղրկելով բաժնորդագինը։

«ԱՐՄԷՆԻԱ»Ի ՅՈՒՇԱՐԱՐ

Ա. ՏԱՐԵԿԱՆ

(1885—86)

Արմէնիայի Ա. տարեշրջանի թիւերը այժմ բոլորովին սպառած և մինչև ժամանակ չատերի հետաքրքրութեան առարկայ դարձած լինելով, այդ շրջանի մէջ Մ. Փորթուգալեանի գրած առաջնորդող յօդուածներէն գէթ 30ի չափ տեղեակ են Յուշարարի մէջ որ ուզածով գրքով 12ի երեսներէ կը բաղկանայ։

Գինն է 1 ֆրանք և 40 սանթիմ. (Պարսկաստանի համար 1 ֆրանք)։

ՅՈՎՀԱՆՆԱԿՈՒԹԻՒՆ

Սուլթան Համիտ կը քաջալերէ հայասպան ամբաստանութիւնները.— Վիլհելմ կայսրը եւ հայկական խնդիրը.—Աւստրիայի Ֆրանց Յովսէֆ կայսրը եւ Մխիթարեան տպարանը.—Հայեր ի Թիւրքիա.— Ժընեվի Պերպերեան կրթարանը.— Ռուսիոյ հայ եկեղեցիների կալուածների գրաւում.— Կրետէ.—Ալմանիա եւ Վատիկան.— Վիլհելմ կայսրի Արեւելք ճանրորդութիւնը.—Սպանիա-ամերիկեան խաղաղական յանձնաժողովը.— Ֆաշոտա.— Ներքին լուրեր.— Անիշխանականներին դէմ.—Արտասահմանեան լուրեր.—Յանուցումներ.— Բանասիրական (Պուլկարիա)։

Մեզ կը հաղորդեն թէ Եւդոկիացէն Ափրիկեան Տրիպոլիս աքսոր գնացած մահմէտականները որոնք Եւդոկիայի Հայերը կոտորելու և անոնց ստացուածները կողոպտելու ոճրագործութիւններին մանակցած էին, ամէն մէկ ամսի չափ առաջ աղերսագիրներ ղրկեր են դատական նախարարութեան, ներքին գործերի նախարարութեան, կայսերական աւագ թիկնապահ Օսման փաշային և նոյն իսկ սուլթան Համիտին, իրենց ազատութիւն և Եւդոկիա վերադարձը խնդրելու համար։

Հոկտ. 5ին մի հեռագիր գնացեր է Սուլթանին կողմէն Ափրիկեան Տրի պոլսի կուսակալին որ իմացունէ մահմէտական աքսորականներին թէ սուլթանը 200 ոսկի նուէր կը ղնորհէ իրենց որ դրամի նեղութիւն չքաշեն և թէ մօտ ժամանակ ալ ներսէմ չնորհ. ուելով իրենց թոյլտուութիւն պիտի լինի Եւդոկիա վերադառնալու։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Մեզ երբեմն վճռակից պուլկար ազգին՝ որ այժմ նշանաւոր դիրք մը բռնած է Պալքանեան տէրութիւններուն մէջ, Ծագման, պատմութեան և աշխարհագրական դիրքի մասին, համառօտ և տեղեկութիւն մը տալ Արմէնիայի ընթերցողներին օգտակար համարելով, Լարուսի Ընդարձակ Բառարանի 1898ի տպագրութենէն կը թարգմանենք հետեւեալը։

Ծագում

Պուլկարներն Ուրալ գետի եզերքնե-

Միթէ՞ սա մի նոր ապացոյց չէ որ հիներին վրայ կուգայ կաւելնայ, հաստատելու համար թէ Եւդոկիայի Հայերի կոտորածը պատահեցաւ ղրկուած մի հրամանի դործադրութիւնն էր ո՛րի դործադիրները, թէև առ երեսս պատժուած, իրապէս կը վարձատրուին և կը քաջալերուին, մինչդեռ միւս կողմէ անմեղ Հայեր բանտերի մէջ կը փտին դեռ։

ՎԻԼՀԵԼՄ ԿԱՅՍՐԸ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ

«Իրաւունք» կը հրատարակէ թէ Ալմանիայի Վիլհելմ կայսրը փափաք յայտներ է եղեր կ պօլսի մէջ տեսակցիլ Հայերի պատրիարք Ամեն. Օրմանեանի հետ և իր տեսակցութեան նիւթը պիտի լինի եղեր Հայ ժողովուրդի կեանքի և ինչքի ապահովութեան խնդիրը, ինչպէս նաև Երուսաղէմի Ս. Տեղերին վրայ Հայերի ունեցած իրաւունքներին վերաբերեալ մէկ երկու խնդիր։

Այս տեսակցութենէ լաւ արդիւնք կը յուսացուի, ըստ է «Իրաւունք»ի կ.պօլսի թղթակիցը որ միանգամայն յոյս յայտնած է թէ Սուլթանը, թէև առ այժմ կը վարանի իր հաւանութիւն տալ այդ տեսակցութեան, պիտի համակերպի վերջապէս իր մեծ բարեկամի, Վիլհելմ կայսրի փափաքին գոհացում տալու։

Առ այժմ ստուգութեան կը կարօտի դեռ այդ լուր որը «Իրաւունք» ինք ալ վերապահութեամբ միայն հրատարակած է։

ԱՒՍՏՐԻԱՅԻ ՖՐԱՆՑ ՅՈՍԷՖ ԿԱՅՍՐԸ ԵՒ ՄԽԻԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆԸ

Վիէննայի «Հանդէս Ամսօրեայ»ի հոկտեմբեր նոյեմբեր թուին մէջ հրատարակուած է մանրամասն նկարագրութիւն այն այցելութեան որ Ֆրանց Յոսէֆ կայսրն ըրած է, օգոստ. 30ին, տպագրական ցուցահանդէսին, ուր ի հանդէս դրուած էին նաև Վիէննայի Մխիթարեան Հայրերի տպարանական իրերը և տպագրական արտադրութիւնները։

Նորին վեհափառութիւն բարեհաճեր է մանաւանդ այցելութեամբ մը պատուել Մխիթարեաններու տպարանական ցուցահանդէսի բաժինը ուր քառորդ մամէ աւելի մնալով աչքէ անցուցեր է անոնց ցուցադրածները և Գեր. Արքահայրին ու տպարապետ վ. Հ. Գ. Գալէմքեարեանի հետ խօսակցելով տեղեկութիւններ ստացեր է Մխիթարեաններու տպագրական գործունէութենէն վրայ։

Այդ տեղեկութիւններէ կիմացուի որ Մխիթարեան տպարանին մէջ 80–90 աշխատաւորներ անընդհատ կը գործեն և 50–60 լեզուով գիրքեր կը տպագրուին այնտեղ։ Գրաչարները բոլոր Աւետարիացի են, որոնք թէև հայերէն չեն գիտեր, բայց կրնան անսխալ կարդալ հայերէն և չարել։ Թէ ամբողջ Աւետարհանգարիան մէջ Մխիթարեան Միաբանութիւնը մի միակն է որ լատին եկեղեցիին պէտք եղած ամեն եկեղեցական գիրքերն ալ իր սեպհական հրատարակչութեամբ տպագրած է, որոնցմէ չատեր երբորդ և չորրորդ տպագրութեան արժանացած և իր հրատարակութիւն-

---

ըէն (1) եկած կը համարուին ընդհանրապէս։ Կը կարծուի որ քրիստոնէական Թուականի առաջին դարերին մէջ գնացած հաստատուած կը լինին Վոլկաի (2) եզերքները և հոն բարգաւաճ գաղթականութիւններ հիմնած։ Սա ստոյգ է որ միջին դարէն առաջ եկած չեն Դանուբի

(1) Ուրալ գետը որ ռուսական հողին մէջ կը գտնուի, Եւրոպա և Ասիա մէջ տեղն է և կը թափի Կասպից ծովը։

ԽՄԲ. ԱՐՄ.

(2) Վոլկա գետը որ ռուսական հողին մէջ կը գտնուի, Վալտայի լեռնադաշտէն կը բխի և 3430 հազարաւէթր տեղ պտըտելէ յետոյ կերթայ կը թափի Կասպից ծովը, Աժտէրխանի մօտ։

ԽՄԲ. ԱՐՄ.

եղերքը և այդ ժամանակ մոնկոլական ցեղին յատուկ դիմագիծներ չատ ունէին։ Անկէ ի վեր, Հարաւային Սլաւներ այնչափ խառնուեցան իրենց մէջ որ անոնց լեզուն սկսան գործածել և միևնոյն ժամանակ անոնց ազդեցութեան տակ ֆիզիկական և բարոյական փոփոխութիւններ ունեցան։ Այսու ամենայնիւ, դեռ մինչև հիմա ալ կարելի է պուլկար ազգին ծնունդ տուող սլաւական և մոնկոլական երկու տարրերի յատկութիւններն իրենց մէջ գտնել ու զանազանել. բայց գոյնով գէմք, մազ և աչքեր ունեցող Պուլկարներին քով կը հանդիպիս նաև կարճահասակ, լեցուն և հուժկու կազմուածքով, թուխ երեսով, կարճ գլխով, ճուռճան գէմքով, ուռած այտերով, ազտիկ աչքերով, տափակ քիթով և դուրս ցցուած ծնօտներով

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԻ

Հոկտեմբերի 29-ին Մոսկվայում տեղի ունեցավ Հայկական սովետական հանրագիտության տարի հանդիսավոր նիստը։ Նիստին մասնակցում էին Մոսկվայի գիտական հաստատությունների ներկայացուցիչներ, գրողներ, արվեստագետներ, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ։

Նիստը բացեց Հայկական սովետական հանրագիտության գլխավոր խմբագրության նախագահ ընկ. Ա. Ղազարյանը։

Ընկ. Ղազարյանը իր ելույթում ասաց, որ Հայկական սովետական հանրագիտության հրատարակությունը ավարտվում է 1940 թվականին։ Հանրագիտության 11 հատորներից 7-ը արդեն լույս է տեսել։ Հանրագիտության հրատարակությունը ավարտելու համար անհրաժեշտ է 1941 թվականին հրատարակել 4 հատոր։

— Հանրագիտության հրատարակությունը ավարտելու համար,— ասաց ընկ. Ղազարյանը,— մենք պետք է ունենանք 400 թերթ տպագրական մամուլ։ Մեզ անհրաժեշտ է նաև 60 տոննա թուղթ։ Մենք ունենք ամենաանհրաժեշտ տեխնիկական միջոցները, որպեսզի հանրագիտության հրատարակությունը ավարտենք 1940 թվականին։

Ընկ. Ղազարյանը խոսեց նաև հանրագիտության հրատարակության որակի մասին։

— Օրհասական պետք է դարձնել,— ասաց նա,— հանրագիտության հրատարակության որակի բարձրացումը։ Մենք պետք է ունենանք ոչ միայն քանակապես մեծ, այլև որակապես լավ հանրագիտություն։ Մենք պետք է ունենանք հանրագիտություն, որը կարող լինի ծառայել ոչ միայն մասնագետներին, այլև լայն ընթերցող զանգվածներին։ Մենք պետք է ունենանք հանրագիտություն, որը կարող լինի ծառայել ոչ միայն մասնագետներին, այլև լայն ընթերցող զանգվածներին։

Ընկ. Ղազարյանը խոսեց նաև հանրագիտության հրատարակության ֆինանսական հարցերի մասին։

Ելույթներ ունեցան նաև ընկ. Ա. Ալիխանյանը, ակադեմիկոս Վ. Համբարձումյանը, ակադեմիկոս Ա. Ալիխանովը, ակադեմիկոս Ա. Աբրահամյանը, ակադեմիկոս Ա. Ալիխանյանը, ակադեմիկոս Ա. Ալիխանյանը, ակադեմիկոս Ա. Ալիխան

մացունէին «Հօհէնցօլէրն»ի ճանբայ ելնելը։

ՍՊԱՆԱ-ԱՄԵՐԻԿԵԱՆ ԽԱՂԱՂԱԿԱՆ ԳԱՆԳՆԱԺՈՂՈՎԸ

Սպանա-ամերիկեան խաղաղական յանձնաժողովը որ Ֆրանսայի արտաքին գործերի պալատին մէջ կընէ իր նիստերը, երեքշաբթի օր (Հոկտ. 11) ըրաւ իր չորրորդ նիստ ուր շատ մունակեց օգոստ. 12ին վաշինկթընի մէջ կնքուած խաղաղութեան սկզբնական պայմանագրի քննութիւնը։ Յանձնաժողովը որոշեց խնդիրները ուսումնասիրել այն կարգով ինչ կարգով որ դրուած են սկզբնական պայմանագրին մէջ։ Որոշուեցաւ յաջորդ նիստն ընել Հոկտ. 14ի ուրբաթ օր (երէկ)։

— Վաշինկթընէն կը հեռագրեն Հոկտ. 11ին թէ ճիշդ չէ այն լուր որ իբր թէ փարիզի խաղաղական յանձնաժողովը Փիլիպպեան կղզիների խնդրին վրայ միայն վիճաբանութիւն եղած է դեռ։

Միացեալ Նահանգները կը մերժեն ունենալ պարտաւորութիւն ստանձնել Ռուպարի և Բօրթօ-Րիքօի պարտքի վճարման նկատմամբ։

— Մատրիտէն կը հեռագրեն Հոկտ. 12ին թէ փարիզի խաղաղական յանձնաժողովի ամերիկեան անդամներէն դիւքին նկատմամբ տարածուած լուրերը ստոյգ դժգոհութիւն պատճառած են հոն. մանաւանդ այն լուր՝ թէ Ամերիկացիները չեն ճանչնար Ռուպարի և Բօրթօ Րիքօի պարտքերը։

ՖԱՇՕՏԱ

Անգլիական կառավարութիւնը «կապոյտ տետրակ» մը հրատարակեց վերին Նեղոսի խնդրին նկատմամբ։ «Կապոյտ տետրակ»ը կը ջանայ ապացուցանել թէ Ֆաշօտա անգլիական ազդեցութեան չրջանակին մէջ գտնուելով և այդ բան արդէն յայտարարուած լինելով անգլիական կառավարութեան կողմէն, Ֆրանսա իրաւունք չունի հոն երթալ հաստատուելու։

— Նախորդ նախարարապետ և արտաքին կուսակցութեան պարագլուխ լորտ Ռոզպերի Հոկտ. 12ին Լիվերսմի մէջ հողագործական մրցանակաբաշխի հանդէսին առթով մի քաղաքական ճառ խօսեցաւ որի Ֆաշօտայի վերաբերեալ մասը քաղուածօրէն կը դնենք այստեղ։

«Վերին Նեղոսի գործերի շատ տագնապալի կացութեան վրայ լռութեամբ կուզէի անցնել, ըսաւ. բայց ես պատասխանատու եմ սըր Էտուարտ Կրէյի, 1895 մարտին, արած մի յայտարարութեան որ այնչափ սխալ կերպով կը վերաբերի անգլիական շահերին։ Այդ յայտարարութենէ բուռ մ'անգամ չեմ առներ։ (երկարատև ծափահարութիւններ։) Այս խնդրի առթով երկու երեք նը-

կատողութիւն կայ անելիք որոնք վերին աստիճանի ծանրակշիռ են։ Առաջինն այս է որ անգլիական կառավարութեան կողմէն եղած բացորոշ յայտարարութեան հակառակ թէ այս ինչ գործողութիւն հակաբարեկամական պիտի նկատուի, այդ գործողութիւն կատարուեցաւ, չնայելով ֆիզիկական և աշխարհագրական գրեթէ անյաղթելի դժուարութիւններուն։

«Հակաբարեկամական» ածականը որ սովորական խօսակցութեան մէջ մեծ նշանակութիւն մը չունի, դիւանագիտական լեզուին մէջ քաղաքական ծանր նշանակութիւն կունենայ և երբ այդ բառ գործածուի մէկ կառավարութեան ուրիչ կառավարութեան մը նկատմամբ ըրած գործողութեան որպիսութիւնը ցոյց տալու համար, կը նշանակէ թէ ծանր վիճակի մը մէջ կը գտնուի գործը։ Անկէ զատ, գործը շատ աւելի ծանր վիճակ մը կը ստանայ նաև անոր համար որ անգլիական կառավարութիւնն այս պարագայի մէջ իրեն կռնակ ունի ամբողջ թագաւորութեան միացած ոյժերը։

«Նախարարութեան մը քաղաքականութեան վերաբերեալ խնդիր մը չէ այս, այլ նոյն իսկ ազգի քաղաքականութեան. և ունէ կառավարութիւն որ փորձէ յետ կենալ, խոյս տալ անկէ, մէկ շաբաթ չկրնար մնալ իշխանութեան վրայ։ (երկարատև ծափեր։) կառավարութիւնը պէտք է որ կապոյտ տետրակին մէջ իր ներկայացուցած դիրքը պահպանէ և ազգն ամբողջ ամեն զոհողութիւններ պիտի ընէ իրեն աջակցելու համար մինչև վերջը։ (երկարատև ծափեր։)

«Ա.րդարև Ֆրանսայի համար ալ շատ ծանր կէտ մը կայ. այն է դրօշակի պատուի խնդիրը։ Մեր մէջէն ոչ ոք կը փափաքի բարեկամ ազգի մը դրօշակը յարգելուն մէջ պակասութիւն մ'ընել։ Այսպիսի հանգամանքներու մէջ մենք կուզենք գործադրել սա սկզբունքը. Մի՛ ընէք ուրիշին ինչ որ չէք ուզեր որ ուրիշները ձեզի ընեն։ Բայց վերջապէս դրօշակը փոխադրելի իր մ'է. տնազատախնամ անձեր կրնան զայն փոքրիկ ծրար մը չինելով տանիլ։ Ես յոյս ունիմ որ, այս գործողութեան մէջ, պարզուած դրօշակը Ֆրանսայի դրօշակը չհամարուիր, այլ երկրախոյզի մը դրօշակը որ, հետևապէս, իր ծալքերի մէջ չկրեր Ֆրանսական Հանրապետութեան ամբողջ ծանրութիւնը։

«Այս ըսելէս յետոյ, թոյլ տուէք ինձ որ յայտնեմ թէ, իմ կարծիքով, ապահովացուցիչ նշաններ կը տեսնեմ ես այս գործի մէջ։ Նախ որ Ֆրանսայի արտաքին գործերի նախարար Տ. Տէլքասէ թէև ոչ միշ նպատակաւոր արամագրութեամբ մը, բայց այնուամենայնիւ հաշտասիրական ոգւով մը ընդունած է մեր դեսպանը։ Քանիցս անգամ յայտարարեր է թէ Մարշանի արշաւախումբը չկայ Ֆաշօտայի մէջ։ Այդ յայտարարութիւն Մարշան հասպարապետին Ֆրանսական դրօշակը պարզելուն պաշտօնական դիրքը կը խանգարէ, ինչ որ այդ գործողութեան շատ աւելի ծանր հանգամանք մը կուտար։

«Գիտեմ որ Մարշան հազարապետը Քիչնէր զօրավարին յայտարարեր էր թէ հրահանգ ստացած էր Ֆրանսական դրօշակը պարզելու. գիտեմ նոյնպէս որ Տ. Լիօթաբ, Ուգանդայի կառավարիչը, վերջերս խօսած մէկ ճառին մէջ այնպիսի գաղափարներ յայտնեց որոնք կը հակառակին հաշտասիրական տեսութիւնների որոնք կը յուսամ թէ կը տիրեն Փարիզի մէջ. բայց ես այս գործի մէջ կը նախընտրեմ Տ. Տէլքասէի բարձրագոյն հեղինակութեան նշանակութիւն տալ քան թէ իր ստորակարգեալներին, Մարշանի և Լիօթաբի, և յոյս ունիմ թէ քիչ առնէն պիտի հասկցուի որ «Տիար» Մարշանի արշաւախումբը, Ֆրանսական հեռաւոր մի երկրէ ճանբայ ելած, այնպիսի մի երկրի մէջէն անցնելով որի վրայ Ֆրանսա ոչ մի իրաւունք չունի, Ֆրանսական կառավարութենէն արտօնուած չէր։

«Բայց ալ աւելի ապահովիչ ուրիշ մի նախանշան ալ կայ. այսինքն՝ առժամանակեայ կերպով իր լքած երկիրների վրայ Եգիպտոսի ունեցած տիրապետութեան իրաւունքի մասին պնդելու համար, մենք կը գործածենք այն փաստեր որ Ֆրանսական կառավարութիւնն ու դեսպանները գործածած են այս վերջին տարիներ և մեր փարիզի դեսպանին կը հնայ կրկնել միայն ինչ որ երբեմն ըսած են Ջեարներ Ջըքրէ, տը Ռուբսէլ և Համնօթօ, անդիմադրելի կերպով հաստատելու համար Եգիպտոսի իրաւունքները Ֆաշօտայի վրայ. ահա այս ալ մի գլխաւոր կէտ է ի նպաստ խաղաղութեան։

«Վերջապէս, նկատողութեան արժանի մի ուրիշ կէտ ալ կայ. Նեղոսի հովտի առանձնացած մէկ տեղը Մարշան հազարապետի բռնած դիրքը նիւթապէս անպաշտպանելի դիրք մ'է և հետևապէս չկրնար երկար ժամանակ տևել։ Բայց ունիմ ուրեմն որ միջադէպը կը կարգադրուի խաղաղութեամբ և համոզելով։ Բայց պէտք է լաւ իմացուի որ Անգլիա չկրնար այս գործի մէջ զիջումներ անել Եգիպտոսի իրաւունքների մասին։ (Ծափեր։) Պէտք չէ մոռնալ թէ վերջին ժամանակները, այս խնդրի մէջ ինչպէս նաև ուրիշ ամեն խնդիրների մէջ, Անգլիայի հետ չափազանց վարուելաձև պատրաստ թէ շատ նշանակութիւն չընծայելու մի տրամադրութիւն լիներ. երկրագունդի շատ մը տեղերը, Անգլիացիներուն տհաճութիւն պատճառելու կերպով տանձգութիւններ ըրին Անգլիայի իրաւունքներուն վրայ։ Խաղաղասիրութեան ճանապարհին մէջ չափէն աւելի յառաջ գնացած է Անգլիա. իր հաշտասէր ոգին օտարներուն վրայ պիտի տպաւորութիւն թողած է որ պէտք է իր իրաւունքները և իր դրօշակի պատիւ պահպանելու համար հիմա առաջուան չափ կարելի և հաստատամիտ չէ, այլ տկարացած է։

«Այդ մի աղաչալ է որ կրնայ ազնուական խառնակութեան մը առիթ դառնալ։ Ազգերուն միջև լաւ յարաբերութիւնները այն ժամանակ միայն կրնան գոյութիւն ունենալ երբ փոխադարձաբար իրար կը յարգեն, երբ փոխադարձապէս մէկը միւսի երկիրն ու դրօշակը կը յարգէ։»

ՆԵՐԲԻՆ ԼՈՒԻՐԵՐ

Որմնադիրներուն և առհասարակ շինութեան մէջ աշխատող բանուորներուն գործադուլին պատճառով յուզումը կը շարունակէ դեռ փարիզի մէջ։ Գործաւորներէն մաս մը որոնք համամիտ չէին գործադուլին, կուզեն շարունակել իրենց աշխատանք. մաս մ'ալ անգործութեան պատճառով իրենց ունեցած նեղութիւններուն և միևնոյն ժամանակ աւելորդ ծախքերի ենթարկուելուն չկրնալով դիմանալ, վերըսկած են իրենց աշխատանք. բայց գործադուլ անողները կերթան կը խանգարեն զանոնց և բանի կը ստիպեն իրենց հետ միանալ. ատոր համար կառավարութիւնը զանազան տեղերէ զօրքեր բերել կուտայ փարիզ որոնք շինութիւնների տեղերը կը շրջապատեն, չթոյլատրելու համար որ խռովութիւններ և կռիւներ ծագին։ Այս կերպով աշխատութիւնները մասամբ վերսկսած են։

Բայց ուրիշ կողմէ ալ, երկաթուղիներու գործաւորները որոշեր են փարիզի մէջ գործադուլ անել։ Որպէսզի չոգեկառքերու երթևեկութիւնը չընդհատուի, վարչութիւնը նախազգուշական միջոցներ ձեռք առած է և կառավարութիւնն ալ զօրքերով պաշտպանած է չոգեկառքերու գլխաւոր կայարանները որպէսզի աշխատանքը չարունակել ուզող գործաւորներուն դէմ արգելքներ չհանեն միւսները։

Հինգշաբթի երեկոյ Մարսէյլի Օէն Շարլըի կայարանն ալ զօրքեր խըմբուած էին հսկելու համար. բայց Մարսէյլի երկաթուղային գործաւորներու խմբակցութիւնը, ինչպէս կերևի, արդէն համակարծիք չէ այժմ գործադուլ անելու։

ԱՆԻԵԹԱՆԱԿԱՆՆԵՐԻՆ ԴԷՄ

Հռովմէն կը հաղորդեն Հոկտ. 11ին թէ տերութիւններէն Ֆրանսա, Ռուսիա, Սիւիս, Աւստրիա և Սպանիա միայն պատասխանած են դեռ թէ հակաՆիլհանական դեսպանաժողովին իրենք ալ կը մասնակցին։ Գէլժիքի և Հոլանտի մասնակցութեան պատասխաններն ալ վաղը կուգան։

Իւրաքանչիւր տէրութիւն, իր դնած գաղափարները, իր կողմէ երկու իրաւագէտ խորհրդական ալ պիտի նշանակէ դեսպանաժողովին մասնակցելու համար։

— «Տէյլի Մէյլ»ի վիէննայի թղթակիցը կիմացնէ որ հականիլհանական միջազգային դեսպանաժողովին մէջ Աւստրիայի ներկայացուցիչը հետևեալ առաջարկները պիտի ընէ. 1. Անիլհանական բոլոր լրագիրներուն ու հրատարակութիւնները արգիլել պատերազմ. 2. Օտար երկիրը ապաս-

տանած բոլոր անիշխանականները յանձնել իրենց երկրի ոստիկանութեան ձեռքը. 3. Ոճրագործութիւն կատարած կամ ծրագրած անիշխանականները յանձնել պատերազմական ատեանի դատաստանին։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ԼՈՒՐԵՐ

Մարքիսէն կը հաղորդեն հոկտ. 11ին թէ պատերազմական նախարարը հեռագիր ստացած է Րիոս զօրավարը կը հեռագրէ թէ վիզոյա կղզիներին մէջ Սպանիացիները մի նոր յաղթութիւն տարին ապստամբներին վրայ։ Ապստամբներէն 120 մարդ մեռած և չատեր վիրաւորուած են. իրենց բոլոր զէնքեր, չատ մը թնդանօթներ և մի քանի միլիոն փամփուշտ գրաւուեցան։

Րիոս զօրավարը վիզոյայի մէջ ապստամբութիւնը վերջացած կը համարի. ապստամբներն ա՛լ չեն կրնար չարժման նոր փորձեր անելու վրայ խորհիլ որովհետև իրենց կոչերուն չեն պատասխաններ տեղացիները։

— Հռովմի «Իթալի» լրագիրը կը մացունէ որ Ծովային նախարարը պէտք եղած գումարները ձեռք բերած է, Իտալիան նաւային ոյժը աւելցնելու և արդէն չինուիլ սկսուած մարտանաւերի չինութիւնները փութով առաջ տանելու համար։ Բալսամպո Ծովակալը այդ նպատակի համար պիտի կրնայ առաջիկայ տարին 50 միլիոն ֆրանգի չափ իր տրամադրութեան տակ ունենալ։ Ուրիշ գումարներ ալ պիտի վերցուին հետզհետէ ներկայացուելիք եվտացոյցներէն և պիտի յատկացուին նաւային չինութիւններուն։

— Եգիպտոսի Խըտիվ Աբպաս փաշան իր «Մահրուսա» զբօսանաւով Տարտանէլէն անցած է հոկտ. 11ին, գէպի Ալեքսանդրիա երթալու համար։

Հետևապէս չհաստատուեցաւ այն լուր թէ Սուլթան Համիտ ուզեր է վար դնել Աբպաս փաշան, կ. պոլսի մէջ ինք անձամբ վիճելէմ կայսրին ներկայացնելու համար Եգիպտոսի Խըտիվը։

Լոյս տեսաւ

ՐԱՖՖԻԻ

ՍԱՄՈՒԷԼ

պատմական վէպը

Ա. Բ. Գ. Գիրք

Հեղինակի վերջին պատկերով

Գինն է 7 շիլինգ

Իսկ «Դաւիթ-Բէկ» հատոր Ա, Բ և Գ վերջաբանով և «կայծեր» հատոր Բ. միակտոր, լոյս պիտի տեսնեն ներկայ տարուայ ընթացքում, որոնց բաժանորդագրութիւնը շարունակուում է. երկու դրքի միասին բաժանորդագինն է՝ 10 շիլինգ. իսկ լոյս տեսնելուց յետոյ կարժենան 14 շիլինգ։

Յանկացողները թէ՛ Սամուէլի և թէ՛ Րաֆֆիի միւս երկերի համար, կարող են դիմել այս հասցէին

Mme Raffi

270, Uxbridge Road.

Shepherd's Bush,

London W.

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

—ինչպէս ամեն լրագիրներ, Արմենիան ալ կընդունի ծանուցումներ հրատարակելու համար. անոնք որ պէտք կունենան Արմենիայի միջոցով մեկի դիմում անել կամ մի բան յայտարարել, պատրաստ ենք ընդունելի իրենց ծանուցումներ, ըստ լրագրական սովորութեան։ Ծանուցումներուն գիները նշանակուած են Արմենիայի հակառը, տառը՝ վրայ հաշուելով. 1 երկօրեայ (գէտագիր) համար 2 սանտիմ և 1 բոլորդրի համար 1 սանտիմ։ 3 անգամ դրուելիք ծանուցումի գնին վրայ 0/0ին 10 զեղչ կը լինի. 10 և աւելի անգամներ դրուելիք ծանուցումի գնին վրայ 0/0ին 30 զեղչ։ Սակարկութիւն չընդունուիր։

ՇԱԽՄԻ ԳԻՐՔԵՐ

Արմենիայի համբագրատան մէջ ծախու կը գտնուին հետեւեալ գիրքերը որոնց առջեւ նշանակուած գիները մէջ հաշուուած է նաև ղրկելու փոստի ծախքը։

Ծրարները ապահովագրուած (recommandé-registered) առնելու ուզողները պէտք է որ ամեն մէկ ծրարի (մինչեւ 2 քիլ.) համար 25 սանթիմ ապահովագրութեան ծախքը վճարեն։

ԻՆՔՆՈՒՍՈՒՑԻՉ ԱՆԳԼԻՍԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ

Ծօրինեց

ՊԵՏՐՈՍ Ռ. ԹՈՒՐՈՍԵԱՆ

Այս գիրքը պատրաստուած է յատկապէս Ամերիկայի Միացեալ Նահանգաց մէջ գտնուող Հայերուն Ամերիկեան Անգլիերէն լեզուն աւելնադիւրին ոճով սովրեցնելու համար։ Ինքնուսուցիչը յօրինուած է գերմանական և ամերիկեան մանկավարժական սկըզբունքներուն վրայ հիմնուելով, և յարմարցուած է մարդակազմութեան ու իմացական փիլիսոփայութեան նորագոյն պահանջքներուն և Ամերիկայի Հայոց իմացական կարողութիւններուն ու սեղական պահանջներուն։ Առաջինն է իր տեսակին մէջ։

Կը բաղկանայ աւելի քան 350 երեսներէ և կը պարունակէ աւելի քան 3,000 ամենէն չատ գործածուած բառեր։ Ամեն բառի առջև գրուած է նոյն բառի ամերիկեան մաքուր անգլիերէն հնչուածը և ամերիկեան նշանակութիւնը։ Գիտական բառերու առջև աւելցուած են քերականական, պատմական, աշխարհագրական, աստղաբաշխական, չափաբերական և ընկերաբանական գանազան ծանօթագրեր։ Գինն է 10 ֆրանգ (2 առլար) Մարսէյլի մէջ։ Մարսէյլէն դուրս ղրկուելու համար 10 ֆր. և 80 սանթիմ.։

— HISTORY of the ARMENIANS IN INDIA. From the earliest times to the present day. By MESROVB J SETH Armenian examiner to the University of Calcutta and Member of the Asiatic Society of Bengal. Calcutta. 1895.

(Price: 5 francs at Marseilles or 5 fr. & 50 centimes post free.)

(Մարսէյլի մէջ 5 ֆրանգ է. Մարսէյլէն դուրս ղրկուելու համար 5 ֆրանգ և 50 սանթիմ։)

— ԳԻՏԱՆԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ. (Յատկապէս պատրաստուած Ամերիկայի Միացեալ Նահանգաց Հայ գաղթականներուն կեանքի, ժամանակի և դրամի խնայողութիւն ընել տալու հարկ եղած դիւրութիւններն ընծայելու համար։) Աշխատասիրեաց պետրոս Ռ. Թորոսեան. Տպագր. Նիւ Եորք, Էվիսա Թալաե և ընկ. 1897։ Ամերիկա գնացող Հայերին և կամ արդէն հոն գանուողներին համար չատ կարևոր գիրք է։ Գինն է 1 ֆրանգ և 25 սանթիմ։

Արտօսր Հայաստանի կամ Տեղեկագիր Բալուայ, Քարբերդու, Ջարսանճագի, Ճապաղճուրի և Երզնկայու։ Յաւելուած ըստ խնդրանաց ազգասիրաց «Խոլան գաւառ»։ Աշխատասիրեաց Պօղոս Ս. Վ. Նապաեանեան։ 2 ֆրանգ։

ԻՄ ՀԱՅՐԱՍՊԱՆ ԸՆԿԵՐՈՋ

(Կ. ՊՕԼՍՈՑ ՀԱՑՈՑ ԿԵԱՆՔԷՆ ԱՒՆՈՒԱՑ ՄԻ ԻՐԱԿԱՆ ՎԷՊ)

ԳՐԵՑ ԱԶԳԱՅԱՐՈՒԹԻՒՆ

Այս հետաքրքրաշարժ գրուածքը կը ներկայացնէ ընտանեկան ախուր պատկերներէ մին ուր կը տեսնուի թէ անբարոյական մի հայր իւր ապականած վարքուբարքով որչա՛փ չարիքներէ պատճառ գարձած է և վերջի վերջոյ ինք ալ իւր որդու ձեռքով սպանուած և անհետացած է աշխարհէ։ Գինն է 1 ֆրանգ, (75 սանթիմ)։

ԾՐ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Մ. ՓՈՓՈՒԳԱԼԵԱՆԻ

ՆԱՄՈՑՇՆԵՐ

Մ. ՓՈՓՈՒԳԱԼԵԱՆԻ

ԳՐԱԾ ՈՏԱՆԱՒՈՐՆԵՐԷՆ

Մ. Փոփուգալեանի դրած հայրենասիրական ոտանաւորներէ մի քանին ամփոփուած են այս տետրակի մէջ իրենց նմոյշները ղանազան քաղաքներու մէջ և պանդուխտի տպաւորութիւնները որոնք ժամանակին հրատարակուած չլինելով կորսուած են այժմ։ Այն մի քանի ոտանաւորներ որոնք արդէն նմոյշ տեսած են այս տետրակի մէջ, ցիկ և ցան կը գտնուին Կ. Պոլիս տպագրուած ազգային եկեղեցականներու մէջ՝ որոց վերջաբին տպագրութիւնն ալ տարիէ աւելի եղած է, և Ամերիկա լրագիրներուն մէջ։ Նմոյշներ մէջ փոքրիկ տեղեկութիւններ տրուած են նաև թէ այդ ոտանաւորներ ինչ տպագրութիւններու տակ նկրչուած գրուած են։ Գինն (10 սանթիմ) 15 սանթիմ։

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ Մ. ՓՈՓՈՒԳԱԼԵԱՆ

Մ. Փոփուգալեանի հրատարակած գիրքերուն վրայ ժամանակ առ ժամ կը լինի Պարսկաստանի Հայերուն հասնելու որոնց կը ղրկուի փոխադրի մէջ նշանակուած գիներուն։

Ա. ՀԱՑ ԴԻՒՑԱԶՆՈՒՀԻ ՄԸ (Սպառած)

Բ. ՀԱՑ ԳԻՒՂԱՑԻ »

Գ. ՍԱՂՄՈՍ ԻՍՐԱՑԵԼԻ »

Դ. ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՊՈՒԼՂԱՐԻՈՑ ԵՒ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆՔ ՊՈՒԼՂԱՐ ԱՊՈՏԱՄԲԱՑԱՑ (Սպառած)

Ե. ՀԱՑԱՍՏԱՆԻ ԹՇՈՒԱՌՆԵՐԸ.—(Հայաստանցիներէ պանդխտութեան տխուր հետեւանքներէ սէկ փոքրիկ պատկերը կը ներկայացունէ վիպական կերպարանքէ։) Գինն (90 սանթիմ.) 1 ֆրանգ 20 սանթիմ.

Զ. ԳԱՄԱՌ ԴՊԹԻՑԱ — ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ յետ այբուբենաց ուարտեղաց (Սպառած)

Է. ԼԻՆՋԻ ՕՐԷՆՔԸ ՅԱՃԿԱՀԱՑԱՑՈՑՆՈՒՄ. (Սպառած)

Ը. ԹԻՒՐՔԻԱՅ ՀԱՑԵՐՆ ԵՒ ԻՐԵՆՑ ԴՐԱՑԻՆԵՐ (Թիւրքիոյ Հայերին և իրենց դրացի ազգերի վրայ վիճակագրական և ցեղարանական ամփոփ և հետաքրքրաշարժ տեղեկութիւններ կը պարունակէ։ Թիւրքահայաստանի մէջ բնակող այլ և այլ ազգերէ բնակիչներու թիւին բազդատական մէկ ցուցակն ալ կցուած է տետրակին վերջը։) Գինն 50 սանթիմ (35 սանթիմ)։

Թ. «ԱՐՄԷՆԻԱ»Ի ՑՈՒՇԱՐԱՐ (Արմենիայի Ա տարեշրջանի թիւերը այժմ բոլորովին սպառած և մնեւնոյն ժամանակ չատերի հետաքրքրութեան առարկայ գարձած լինելով, այդ շրջանի էջ ի Ծօսթուգալեանի գրած առաջնորդող յօդուածներէն գէթ 30ի չափ ամփոփուած են ցուցարարի մէջ որ ուրիշ ծանր դիրքով 124 երեսներէ կը բաղկանայ)։ (1 ֆրանք)։ 1 ֆր. 40 սանթիմ

Ժ. ՎՐԷԺ (Պուլկարիոյ մէջ Թիւրքերէն սրած բարբարոսութիւններէն մի փոքրիկ պատկեր կը ներկայացունէ և ցոյց կուտայ թէ Պուլկարներն ի՛նչպիսի միջոցներէ դիմած են իրենց վրէժ լուծելու համար)։ (15 սանթիմ) ,20 սանթիմ.

ԺԱ. ԹՈՄԱՍ ՐՈՑԱՐԻՍ (Ցունաստանի մէջ Թիւրքերէն սրած բարբարոսութիւններէն մի փոքրիկ պատկեր կը ներկայացունէ և ցոյց կուտայ թէ Ցոյներն ի՛նչպիսի միջոցներէ դիմած են իրենց վրէժ լուծելու համար), (0,15սանթիմ) 20 սանթիմ։

ԼՈՒՍԻՆԵԱՆ ՍԻՐԱՑԱՆԻ ՊԱՏԿԵՐԸ

Ճանկական բռնութեան նահատակ եղող Խորէն Նարպէյ-Լուսինեան Սիրացանի պատկերը ընտիր թղթի վրայ տպուած կը ծախուի Արմենիայի համբագրատունը։ Գինն է 65 սանթիմ, փոստի ծախքը համբագրատունէն վճարուելով։

ՅՆՕՐԷՆ—ԽՄԲԱԳԻՐ

Մ. ՓՈՓՈՒԳԱԼԵԱՆ

ՄԱՐՍԷԼ

Հայերէն տպարան Մ. Փոփուգալեանի

Le Gérant: François CARRIERE

Marseille. — Imprimerie et Papeterie du Midi

Quai du Canal, 9